ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

14.05. 2016թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյան Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, Ս. Սաֆարյանը և Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Քննարկել և հաստատել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
2.Քննակել ֆակուլտետի ավարտական կուրսերի նախապաշտպանությունների արդյունքները:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ ֆակուլտետի գիտխորհուրդ են ներկայացվել Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառարվարման և մշակութաբանության ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները, որոնք քննարկվել են համապատասխան ամբիոններերում:

Արտահայտվեցին - Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը

Որոշեցին- հաստատել Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառարվարման և մշակութաբանության ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները

2.Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ <<Սերվիս>> մասնագիտության ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը անց է կացվել ժամանակացույցին համապատասխան /ապրիլի 29-ին/: Նախապաշտպանությունը անցկացվեց ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և ավարտական աշխատանքների ղեկավարների մասնակցությամբ, որը հնարավորություն տվեց առկա խնդիրներից շատերը լուծել տեղում: Նախապաշտպանության ընթացքում համարյա բոլոր ուսանողները վերջնական տեսքով ներկայացրին և պաշտպանեցին իրենց աշխատանքները. որոշ աշխատանքներում հիմնական թերությունները կապված էին ներածության, եզրակացությունների և քարտեզների կազմման հետ: Բոլոր ուսանողներին հնարավորություն տրվեց ամբիոնից ներկայացնել իրենց աշխատանքները: Անհատապես բոլորին նշվեցին աշխատանքներում առկա թերությունները և տրվեցին դրանց վերացման սկզբունքները :

Լսեցին - Հ. Մարզպանյանին

Հ. Մարզպանյանը նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ իսկ պատճառով կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը:
Հ. Մարզպանյանը նշեց, որ ապրիլի 29-ին անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Ավարտական աշխատանքների ղեկավարները համաձայն հաստատված գրաֆիկի կատարել են խորհրդատվություններ և այս պահի դրությամբ ուսանողների մեծ մասի աշխատանքները ժամանակացույցին համապատասխան են ընթանում, իսկ որոշ ավարտական աշխատանքներում առկա են տեխնիկական թերություններ, որոնք անհրաժեշտ է վերացնել մինչև մայիսի 10-ը:

Ամբիոնի վարիչը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Գրախոսման համար տրվում է ոչ ավել, քան 10 օր: Գրախոսությունը ստանալուց հետո չի թույլատրվում աշխատանքի մեջ փոփոխություններ կատարել: Հ. Մարզպանյանը ներկայացրեց գրախոսողների կազմը /կցվում է/:

Արտահայտվեցին - Գ. Միրոյանը, Ա. Սարիբեկյանը

Նրանք նշեցին, որ որոշ ուսանողների մոտ կան տեխնիկական թերություններ: Պետք է սեղմ ժամկետում վերացնել թերությունները և ներկայացնել ամբիոն:

Որոշեցին - Պահանջել ուսանողներից մեկ շաբաթա ժամկետում թերությունները վերացնել, աշխատանքները կանոնակարգված տեսքի բերել և ներկայացնել ղեկավարներին `կարծիք գրելու համար:

3.Լսեցին -ընթացիկ հարցեր

3.1.Լսեցին - Տնտեսագիտության տեսություն մասնագիտության խորհրդատու Ա. Սարիբեկյանին

Նա նշեց, որ 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի սկզբի աշխատանքները առավել ուղղված էին ավարտական կուրսին: Հանդիպումների ժամանակ ստուգվել են ավարտական աշխատանքների թեմաների համապատասխանությունը հաստատված ցուցակին, պարզվել շեղումները և դրանց պատճառները: Երկրորդ և երրորդ կուրսերում նույն աշխատանքը տարվել է կուսային թեմաների հետ: Լսարաններում փաքցվել են թեմաների հաստատված ցանկը, քանի որ կապված դասախոսների ծանրաբեռնվածության հետ նախնական ցուցակում կատարվել են փոփոխություններ: ՈՒսանողների հետ քննարկվել են խոչնդոտող հարցերը`անհրաժեշտ գրականության առկայություն, աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջները, բովանդակային կառուցվածքը, ղեկավարների հետ հանդիպելու գրաֆիկը: ՈՒսանողներին տրամադրվել է ավարտական և կուրսային աշխատանքների գրելու և գնահատման կարգը, պարբերաբար ղեկավարներից տեղեկացվլ է աշխատանքների կատարման ընթացքը: Արդյունքում էական շեղումներ չեն գրանցվել, ավարտական աշխատանքների պաշտպանությունը հաջող ընթացավ, սակայն երկրորդ կուրսում կուրսային աշխատանք չեն կատարել 2 ուսանող, երրորդ կուրսում 1 ուսանող: Պատճառը ուսանողների անպարտաճանաչությունն է:

Առաջին կուրսի աւսանողների մոտ առաջին կիսամյակի ուսումնական գործընթացից հետո բազմաթիվ հարցեր էին կուտակվել կրեդիտային համակարգի, առարկայական ցանկի, կամընտրական առարկաների, իրենց իրավունքների, դասընթացների վերահսկման հետ կապված: Լիարժեք տեղեկատվության համար կազմակերպվեց այցելություններ մասնաճյուղի ստորաբաժանումներ և հանդիպումներ պատասխանատուների հետ` ուսումնական բաժին, ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, ՄԿՈԱ բաժին: Բոլոր ստորաբաժանումների պատասխանատուները մեծ սիրով պատասխանեցին ուսանողների հարցերին և փոխադորձ հարցադրումներ արեցին:

Երրորդ կուրսի ուսանողները դասախոս Հ.Մարզպանյանի ղեկավարությամբ կազմակերպել են գիտական կոնֆերանս <<Հայաստանի մասնակցությունը ԵՏՄ-ին>> թեմայով: Այն անցավ շատ հետաքրքիր և ակտիվ քննարկումներով, քանի որ ուսանողները բավականին լուրջ հետազոտություն էին կատարել և առաջադրել քննարկված խնդիրների սեփական լուծումները: ՈՒԽ և ՈՒԳԸ նորընտիր

նախագահները մեծ ոգևորությամբ նշեցին, որ կնախաձեռնեն նմանատիպ միջոցառումներ:

Նույն կուրսի ուսանողների հետ ճանաչողական այց է կազմակերպվել Իջևանի գինու և կոնյակի գործարան: Այն անցավ շատ արդյունավետ:ՈՒսանողները նախապես պատրաստել էին հարցեր և ստացան իրենց հարցերի լիարժեք պատասխանները: Ավելին իմացան գործարանի ոչ միայն պատմությունը նաև առաջիկա հինգ տարիների արտադրական ու մարքեթինգային ռազմավարությունը:

ՈՒԽ –ը կանանց միջազգային տոնի կապակցությամբ կազմակերպել է միջոցառում, որին մասնակցեցին բոլոր կուրսերի ուսանողները և հրավիրված էին կին դասախոսները: Սա նորընտիր ՈՒԽ -ի կազմակերպած առաջին միջոցառումն էր և կարելի է ասել հաջողվել էր: Միջոցառումից հետո քննարկվեցին բացթողումները և մասնակիցների նոր առաջարկները:

Ինչպես միշտ քննաշրջանից առաջ ստուգվել է հարցաշարերի առկայությունը և քննարկվել դրանց հետ կապված խնդիրները: Լուրջ շեղումներ չեն արձանագրվել, ուսանողների առաջարկները, կապված փոփոխությունների հետ, հնարավորության և թույլատրելի սահմանում իրականացվել են:

ՄԿՈԱ-ի կողմից կազմակերպված հարցումների ընթացքում քննարկվել են ընդգրկված հարցերը և կարծիքները, փորձ է արվել ուղղորդել ուսանողներին լինել ինքնուրույն և օբյեկտիվ:

Նախատեսված աշխատանքներից դուրս անհատական հարցերով ուսանողները դիմել են, բացակայությունների թույլատրելի սահմանը անցած ուսանողների հետ անհատական աշխատանք է տարվել:

Իրականացվել են դասալսումներ ուսանողների ակտիվությունը և մասնագիտական պատրաստվածությունը պարզելու համար:

Լսեցին - Սերվիս մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյանին

2015-2016 ուս. տարվա 2-րդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ –ում ուսումնական խորհրդատուների կանոնակարգի համաձայն Սերվիս մասնագիտության ուսումնական խորհրդատուի կողմից, համաձայն անբիոնի կողմից հաստատված ուսումնական խորհրդատուի աշխատանքայի պլանի և ուսումնական խորհրդատուի խորհրդատվության ժամանակացույցի կատարվել են աշխատանքներ, որոնք ներկայցված են ստորև.

Մշտադիտարկվել է ուսանողների հաճախումները, պարբերաբար կատարվել է մատյանների ստուգում:

Առարկայական ծրագրերի, քննական հարցաշարերի տրամադրման վերահսկում ենք իրականացրել ամբիոնի վարիչի հետ համատեղ: Ժամանակին և ամբողջությանբ ուսանողներին են տրամադրվել քննությունների,ստուգումների հարցաշարերը:

ՈՒսումնական խորհրդատուի ժամերին քննարկվել են տրամադրված հարցաշարերը և հաշվի են առնվել ուսանողների արձագանքները:

Ինչպես առաջին այնպես էլ 2-րդ կիսամյակում մշտական ուշադրության կենտրոնում է եղել ավարտական և կուրսային աշխատանքների ընթացքի վերահսկումը համաձայն աշխատանքների կատարման գրաֆիկի: ՈՒսանողների հետ քննարկվել են ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի , գրականության հետ կապված հարցերը և տրվել են լուծումներ: Ամբիոնի նախաձեռնությամբ և տնօրենության աջակցությամբ 2-րդ կիսամյակում շարունակվել է հայերեն լեզվով մասնագիտական գրքերի ձեռք բերման գործընթացը:2-րդ կուրսի կուրսային աշխատանքների իրականացման և պաշտպանության ամբողջ գործընթացը գտնվել է կուրսղեկի ուշադրության կենտրոնում և անցել է պատշաճ մակարդակով ,իսկ արդյունքները գոհացուցիչ են:

Աշխատանքներ են տարվել անհրաժեշտ գրականության, դասախոսությունների, լրացուցիչ նյութերի տրամադրման, և մասնաճյուղի գրադարանում դրանց առկայության վերահսկման ուղղությամբ:

Ընթացիկ ստուգմների և քննությունների անցկացման, կուրսային աշխատանքների պաշտպանության և ավարտական աշխատանքների նախապաշտպանության գործընթացները եղել են ուսումնական խորհրդատուի վերահսկողության ներքո:

ՈՒսանողների հետ հանդիպում է կազմակերպվել յուրաքանչյուր քննությունից առաջ և հետո: Մասնակցել եմ բոլոր ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփմանը, իսկ որոշ դեպքերում նաև ընթացքին:

Աշխատանքներ են տարվել ուսման վճարների մարման գործնթացի վերահսկման հետ կապված:

Երկրորդ կիսամյակում ամբիոնի կտրվածքով նախատեսված են ընթացիկ քննություններ 12 առարկաներից և ստուգումներ 5 առարկայից:

Դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացվել հարցաշարերը, թեստերի և տոմսերի նմուշները: Ընդհանուր առմամբ ընթացիկ քննությունների կազմակերպումը և անցկացումը կատարվել է կանոնակարգին համապատասխան:

1-ին ընթացիկ քննությունների ընդհանուր միջին գնահատականը 2.54 է, իսկ անվճար համակարգի ուսանողներինը՝ 3,38 է:

Ստուգումների արդյունքում ընգհանուր միջին գնահատականը կազմել է 6,45/1-ին կիսամյակում՝ 6.6/ է, իսկ անվճար համակարգի ուսանողներինը՝7.62 /1-ին կիսամյակում՝ 8,08/: 0 միավոր են ստացել 17 ուսանող ընթացիկ քննություններից:

2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննություններն ու ստուգումները անց են կացվել կանոնակարգին համապատասխան: Քննությունների ընդհանուր միջին գնահատականները 2.80 է /նախորդ տարում՝2,69/, իսկ անվճար համակարգի

ուսանողներինը՝ /նախորդ տարում՝3,26/: 0 միավոր են ստացել բոլոր կուրսերից ընդամենը 6 ուսանող: Գնահատականները աճել են նախորդ տարվա համեմատությամբ: Ստուգումների արդյունքում միջին գնահատականը կազմել է 7.40 /նախորդ տարում՝6,59/, իսկ անվճար համակարգի ուսանողներինը՝ 8.62/ նախորդ տարում՝8,34/:

Արտահայտվեցի - Գ. Ավետիսյանը, Ա. Պոտոսյանը

Արտահատվողները նշեցին, որ ուսումնական խորհրդատուների աշխատանքը կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին- ֆակուլտետի երկու մասնագիտությունների խորհրդատուների կատարած աշխատանքը գնահատել բավարար:

3.2.Լսեցին- ֆակուլտետի ՈՒԽ-ի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունը համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ

Լսեցին ՈՒԽ-ի նախագահ - Հ. Քարտաշյանին

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒսանողական խորհուրդը իր հասարակական գործունեությունը ֆակուլտետում իրականացնում է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ Ուսանողական խորհրդի կանոնադրությունը:

ՈՒԽ –ը կանանց միջազգային տոնի կապակցությամբ կազմակերպել է միջոցառում, որին մասնակցեցին բոլոր կուրսերի ուսանողները և հրավիրված էին կին դասախոսները:

Լսեցին - ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանին

Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրական պահանջներից բխող գործառույթներ և միջոցառումներ, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել ուսանողների գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

Ֆակուլտետի ՈՒԳԸ ՊԸնդհանուր տնտեսագիտության՝ ամբիոնի վարիչ տ.գ.դ, պրոֆեսոր Հ. Մարզպանյանի ղեկավարությամբ կազմակերպել է ուսանողական կոնֆերանս Հայաստանի ադամակցությունը ԵՏՄ-ին խորագրող : Ֆակուլտետի ուսանոների կողմից համապատասխան շնորհանդեսների ուղեկցությամբ ներկայացվել է 7 գիտական զեկուցում:

Արտահայտվեցին - Ա. Մարիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Պ. Ասիլբեկյանը

Նրանք նշեցին, որ ֆակուլտետի նորընտիր ՈՒԽ -ի և ՈՒԳԸ կատարած աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - ֆակուլտետի ՈՒԽ -ի և ՈՒԳԸ կատարած աշխատանքները գնահատել բավարար: